


ԳԵՎՈՐԳ

# ՍԱԼՈՒԿԵՐԻ ՀԵՏ



891.99ր.

4-47

ԱՅՏՀԱՆ

2011-07

391-990

ԳԵՍՈՒԵՐ

4-47

ԱՎ

# ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԵՏ

Շապիկը

ՀՊ. Ա-ԱԽԿՑԱՆԻ

ՁԱՎԱՐ

ԳԵՏՀՐԱՏ  
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲՈԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937

ԾԱՂԻԿՆԵՐՆ ԱՍԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿԻՆ...

Յես թարմ վարդ եմ վառ-կարմիր,  
իսկ յես՝ մեխակ քաղցրաբույր,  
Յես ել շուշան եմ, նայիր,  
Պատրաստ տալու քեզ համբույր»

Մեզ իր գույները տվեց  
Ծագող արեվը բարի,  
Անձրեվ-մայրիկն ել ջրեց,  
Վոր մեր սրտիկը չայրի...

Մենք խաղում ենք շարունակ  
Թիթեռների հետ սիրուն,  
Մտնում նրանց թեփի տակ,  
Նրանց ըզգույշ համբուրում:

Իսկ գիշերը՝ մուշ-անուշ  
Մենք ննջում ենք քեզ նման,  
Հովը ձայնովն իր քնքուշ՝  
Յերդ ե ասում մեզ համար:

Նման չենք մենք քո դալար  
Թաթիկներին ծափ տվող,  
Աշիկներիդ հուսավառ,  
Ժպիտներին քո գելող...



2076  
38

Մենք սիրում ենք քեզ՝ ինչպես  
Բարակ շիթերն անձրեվի,  
Քո ժպիտները պես-պես՝  
Յողված շողովն արեվի...

ԶԵ վոր դու յել մեզ նման  
Վառ ծաղիկ ես շաղաթաց,  
Խորհրդային, աննման  
Մեր արեվի տակ ծաղկած....

ՊՏՈՒՂՆԵՐՆ ԱՍԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿԻՆ...

Նոր խնձոր եմ կարմրաթուշ,  
Քո թշիկին ճիշտ նման,  
Տես, նայում եմ յես քնքուշ՝  
Իմ այս ճղից յես հիմա:

Յես ել տանձ եմ մեղրածոր  
Ու ժպտում եմ ահա քեզ,  
Խւնեմ վրաս արծաթ-ցող  
Քո աչքերի ցողի պես:

Իսկ յես՝ դեղձ եմ թափշամազ  
Լցված կյանքով արեվի.  
Հավաքիլ եմ յես մաս-մաս  
Քաղցրությունները հողի...

Քաղիր, ընկեր դու վոքրիկ,  
Քաղիր դու մեզ մեկ առ մեկ,  
Յեվ կծոտիր՝ անուշիկ,  
Փափլիկ թուշերը դու մեր:

ԹԵԼԻԿԱՆ ՈՒ ՄԵԼԻԿԱՆ

1

Քարունն յեկավ մանուշակով,  
Մանուշակով, մեր աշխարհով,  
Գրլգլալեն առուն հոսեց—  
Սար ու քարին համ բույր տվեց:  
Յեկ բոլորի գլխի վրա՝  
Փռեց արեգն փոսկե վրան...

2

Յերկու սիրուն քույր ճնճղուկներ  
Չունենալով հատիկ ու կեր,  
Նայում եյին իրենց ճանաչ  
Մանուկներին, մարգին կանաչ,  
Նայում եյին խեղճ ու կրակ,  
Ու միտք անում յերկար-բարակ...  
— Շատ եմ քաղցած, թելիկ քույրիկ,  
Վոչ վորդ ունենք, վոչ եւ հատիկ...—  
Սաաց Մելիկը հուսահատ,  
Ու արտասուք թափեց առատ:  
— Լաց մի լինի, — Թելիկն ասաց, —  
Զե, չենք մնա անվերջ սոված,  
Հսպասիր ինձ եստեղ մի ժամ,  
Մինչեվ վոր յես վերադառնամ:

Թեկ քաղցած՝ թռավ-գնաց  
Թելիկն աշխուժ ու թեփաբաց.  
Թռավ՝ հույսը միշտ սրտում վառ,  
Ու կեր վնտոեց նա անդադար:

3

Հանկարծ նրա դեմք բացվեց  
Պտուղներով լիքը պարտեզ.  
Կախվել եյին ճյուղերից ցած՝  
Թշիկներով վառ, կարմը ըրած՝  
Կլոր-կլոր բալ ու կեռաս,  
Թռութը անուշ ու նորահաս:

Կերավ, կերավ ու կշտացավ,  
Տանջող քաղցը նա մոռացավ:  
Զմոռացավ բայց Մելիկին,  
Աչքը ճամբին իր քույրիկին:  
Կտցից կախած բալ ու կեռաս.  
Թռութը անուշ ու նորահաս—  
Վերադարձավ նա քրոջ մոտ՝  
Մրտով կարոտ...

Ուրախացավ Մելիկը շատ,  
Յեկ դադարեց արցունքն առատ,  
Ու փայլ առան ու փայլ տվին  
Նրա աշքերն ասես կրկին:  
Կերավ, կերավ ու կշտացավ,  
Տանջող քաղցը նա մոռացավ:  
Դարձավ ուրախ ու ճըլվուն,  
Գրլգլացող, ինչպես առուն,  
Պատմեց Թելիկն այն պարտեզի  
Պտուղների, ծաղկի մասին,  
Ճըլթճթալով ու լավ պատմեց,  
Մինչեվ Մելիկն անուշ քննեց...

4.

Առավոտը, յերբ լուսացավ՝  
Թելիկն ասաց զվարթաձայն.  
— Թեզ առ, գնանք, քույրիկ Մելիկ,  
Պտուղներով պարտեզն այն լիք,  
Վոր չմնանք այլեփս սոված,  
Յերեկվա պես հուսահատված.  
Ո՞վ իր միտքը կը հոգնեցնի,  
Չի ծուլանա յեզ կաշխատի՝  
Նա ել կուտի...

ԱՄԱՐԱՅԻՆ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Հոկտեմբերիկ ենք մենք յոթ,  
Խաղում, վազում ենք, թռչում.  
Յես մի զինվոր կրակոտ,  
Սուրիկն անվախ ողաչու.  
Վահանը՝ տուն կառուցող,  
Յոլակը հյուսն մի ճարտար.  
Զարիկը տուն լուսացնող՝  
Նուրբ թելերով անդադար:

Իսկ Աստղիկը՝ այգեպան,  
Յանող, ջրող մի աղջիկ,  
Տիգրանիկը բուսաբան,  
Ուսուցչուհի՝ յե նազիկ...  
Ու գնում ենք ծափ տալով,  
Ուրախ յերգով՝ զիլ ու զիլ,  
Կանաչի մեջ լող տալով  
Ու մարգերով նորածիլ:

Յերբ մոտենում ենք ջրի  
Զով ու զուլալ ափերին՝  
Յես զինվորի պես արի —  
Կանգնեցնում եմ բոլորին,  
Բարձրանալով մի քարի՝  
Զայն եմ տալիս համարձակ.  
Սուրիկ, անվախ ողաչու,  
Վահան, ընկեր կառուցող,

Յոլակ, դու հյուսն ու ճարտար,  
Զարիկ, դու տուն լուսացնող,  
Աստղիկ, դու լավ այգեպան,  
Դուք ել, Նազիկ, Տիգրանիկ,  
Ուսուցչուհի, բուսաբան,  
Յեկեք այստեղ տուն շինենք:

Իսկ տան շուրջը՝ մի պարտեղ,  
Պարտեղի մեջ այդ դալար՝  
Մրգեր հասնեն թող պես-պես,—  
Սալոր ու թութ ու յելակ,  
Խնձոր, ծիրան, սերկեփիլ,  
Մարջանի պես կարմիր բար,  
Դեղձը՝ գույնով արեփի,  
Տանձը՝ խոշոր, մեղրահալ...

Հետո շինենք մի գոլրոց,  
Հետն ել թատրոն, գործարան,  
Ապա բարձրը մի ամրոց՝  
Վրան դրոշ հուրհան...  
Կարմիր, կարմիր գրոշակ —  
Մուրճ-մանգաղով զարդարուն,  
Նրա տակին՝ տպարան —  
Գիշեր-ցերեկ գրնգուն...

— Համաձայն ենք, համաձայն, —  
Ասին նրանք այդ ժամին,  
Իսկ յես քարից թռա ցած,  
Փաթաթվեցի բոլորին:  
Ու պար յեկանք, խնդացինք  
Մինչեվ վոսկի իրիկուն,  
Գույն-գույն ծաղիկ փնջեցինք —  
Յերգով գարձանք դեպի տուն...

## ՄԱՅՐԻԿԻ ՊԱՏԻԺԸ

Առած մի մեծ ու փոշոտ քար՝  
Վազեց փողոցն անկարգ Մարգար,  
Որորվելով-շորորալով՝  
Տեսավ անցնում ե մի գեր կով.  
Հորթն ել կողքին ժիր ու սիրուն՝  
Մեկտեղ գնում են դեպի տուն:  
— Հեյ, բղավեց, — ուր եք գնում  
Որորվելով, ինձ չեք տեսնում...  
Ու շպրտեց քար այդ խոշոր՝  
Դեպի կովը որոր-շորոր:  
Այդ վոր տեսավ մայրը նրա՝  
Վազեց-յեկավ արագ-արագ.  
— Չես ամաչում, — ասաց նրան,  
Վազը յերբվոր նստես սեղան՝  
Մերը վրան նստած մատ-մատ —  
Չես ստանա դու անուշ կաթ.  
Չե վոր այդ մեծ քարով այսոր՝  
Վերք հասցրիր կովին հենց նոր.

ՏԻԳՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

ՄԵծ Ստալին, իմ մեծ ընկեր,  
Քեզ իմ մատաղ սրտից այսոր  
Ուղարկում եմ բարեվ ու սեր,  
Քեզ, բոլորից մեծ ու հզնր...  
Դու նայում ես մեր տան պատից  
Լենին պապի հետ միասին,  
Յեվ սիրառատ ժպտում ես ինձ,  
Ինչպես պայծառ լիալուսին:  
Սիրում ես ինձ, վստահ գիտեմ,  
Ինչպես բոլոր մանուկներին,  
Յեվ յես պատրաստ կանգնած քո դեմ՝  
Հսպասում եմ միշտ հրամանիդ...  
Ընկեր Արամն յերեկ պատմեգ,  
Վոր յեղել են քեզ մոտ արդեն  
Ընկերներն իմ ինձանից մեծ,  
Վորոնք անդուլ աշխատել են,  
Քրտինք թափել գիշեր-ցերեկ՝  
Կառուցելու տուն, գործարան  
Յեվ լույս տվող ինչպես արև  
Հիղըռշեն ու հիղըռկայան...  
Մեր սիրելի պապ Կալինին  
Կախ ե տվել նրանց կրծքից  
Շքանշան մեծ լենինի,  
Իրեւ նվեր թանկ ու անդին:

Իմ մեծ ընկեր, մեծ Ստալին,  
Յերբ վոր յես ել շուտ մեծանամ՝  
Աշխատանքովս քեզ սիրելի  
Ու ժրաջան մարդ կղառնամ:  
Ընկերներիս հետ միասին  
Կառուցեմ գյուղ ու քաղաք,  
Նոր ջրանցքներ դաշտի սիջին,  
Գործարաններ՝ տեսակ-տեսակ...  
Ու մի որ ել կգամ Մոսկվա՝  
Ուրախ, հապարտ, կարոտալի,  
Վոր իմ կրծքին ել շողշողա  
Շքանշան մեծ լենինի:

ՇԱՀԱՆԻԿՆ ԵՄ...

Շահանիկն եմ յես փոքրիկ,  
Ունեմ պես-պես խաղալիք,  
Շուտով կգա Լիլիթիկ,  
Վոր մենք խաղանք միասին,  
Ինչզես քոթոթն ու փիսիկ:



### ԾՈՒՅՑ ԹԱՓԱՌՈՂԸ

(Ե. ԳՐԻՉԵԱՇՎԻԼԻ)

Կարելի՞ յե միթե այդպես...  
Մոռանալով գպըոցի ճամբան  
Փողոցներում դու շրջում ես,  
Ընկերներիդ հետ ծույլ, թափառական:

Ինձ պատմել են քո հոր մասին.  
Յեղել ե այդ բանվորն աշխատասեր.  
Թեյեկ չհասավ իր մուրազին,  
Բայց իողեց տիպար ու լավ գործեր:

Նա զոհ դարձավ հին կարգերի,  
Ափսրս, չտեսավ որն այս բախտավոր,  
Ինչպես շարքաշ ու խեղճ գերի —  
Մեռավ կիսաքաղց, մեռավ չքավոր:

Իսկ հիմա քեզ, նրա վորդուն,  
Այդ բոլորն ասես չի տիրեցնում,  
Փողոցներով շրջում ես դու —  
Ընկերներիդ հետ ծույլ ու վատանուն:

Զեյի ասի անգամ բառ մի,  
Յեթե անշնորք, հիմար լինեյիր,  
Մի լացացնի բարեկամիդ,  
Մի ծիծաղացնի թշնամուն անսիրտ:

Պարտիզանը, նայում ե յերբ  
Պտուղներին իր՝ քաղելու համար՝  
Աշխատում ե նա ամեն կերպ  
Մատղաշ ծիլի հետ լինել հոգատար...

Դու ել ծիլ ես, խնամք ուզում,  
Վոր հասակ քաշես յեվ լավ պտուղ տաս,  
Թող չկորչի իմ խոսքը զուր,  
Ականջ արա ինձ, սիրելի տղաս:

Այն, ինչ այսոր դու կորցրիր,  
Դժգար թե վաղը գտնես հեշտությամբ,  
Փռքրիկ յերգն այս՝ դու լավ հիշիր  
Յեվ սրտիդ վրա գրիր նույնությամբ:

2076  
38

## Ս Ե Ն Ք...

(Ա. Շահին)

1.

ՄԵնք, մԵնք, մԵնք—  
Հոկտեմբերիկ ենք,  
Մեր սրտում ունենք,  
Շողջողուն արեվ,  
Վառ գարնւն ունենք  
Մեր գլխի վերեվ:  
Յերբ քայլում ենք մենք—  
Ասես շանթ լինենք,  
Այնպես աշխարհ ենք:  
ՄԵնք, մԵնք, մԵնք—  
Անվախ ու արի  
Հոկտեմբերիկ ենք:

## ԱՔԼՈՐ

2

Աքլնը, աքլնը, այ աքլոր,  
Աչքդ մարջան, ջան աքլոր,  
Դու ի՞նչ վաղ ես վեր կենում,  
Բարձր ձայնով զիլ կանչում:  
Թույլ չես տալիս քնենք լավ,  
Ու կանչում ես միալար,  
Վոր վեր կենանք մենք նույնպես.  
Խաղանք խաղեր մեր պես-պես:  
Աքլնը, աքլո՛ր, այ աքլոր,  
Աչքդ մարջան, ջան աքլոր:

## ՄԵԽԱԿ

3

Քնքուշ մեխակ եմ,  
Սիրուն ծաղիկ եմ,  
Կանաչ ցողունով,  
Աստղիկ աչքերով  
Որորուն համկ եմ.  
Նման եմ այնքան  
Մեր պարտիզպանի  
Սնուշ աղջկան:  
Յես ամեն գույնի  
Ծաղկում եմ կրկին,—  
Վարդագույն, կարմիր,  
Սպիտակ, դեղին:  
Ո, զգուշ քայլիր,  
Զկոխոտես ինձ.  
Իսկ յեթե կուզես՝  
Կամաց քաղիր ինձ,  
Վոր կրծքիդ խփես...

## Ե Ք Ր Ե Մ

(Ա. Կանիկանի)

### ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ

4

Առավոտը յես,  
Յերբ վեր եմ կենում -  
Խոզանակ ձեռքիս՝  
Առամս եմ մաքրում:  
Չես հավատում, տես,  
Փայլում են նրանք  
Մաքուր ձյունի պես:

●

Տասնհինգ տարի մեղնից առաջ,  
Ինչպես բատրակ՝ բեկի առաջ  
Ծեր Քյարամն եր աշխատում  
Ու մի կտոր չոր հաց ճարում:  
Աշխատում եր ամբողջ տարին -  
Ամոան տապին, ձմոան ցրտին,  
Աշխատում եր գիշեր-ցերեկ -  
Մեջքը ծռած ու վիզը թեք:  
Այդ ցափին նա չդիմացավ,  
Նոր - աշխարհը նա չտեսավ.  
Մեռավ՝ կարոտ ուրախ կյանքի,  
Հեռնւ ընկած ընտանիքից:  
Թող սեփ լինի հինը անցած,  
Հինը անցած՝ մոխիր դարձած:

\* \*

Նրա տղան - եքրեմն հիմի  
Սոռոյգ ու ժիր, թուշը կարմիր,  
Սովորում ե դպրոցում նոր  
Ու յերազում տարին բոլոր՝  
Դառնալ անվախ մի ոգաչու.  
Թեթեվ - թեթեվ ինչպես թոշուն՝  
Թեվեր առնել, վերեվ թոշել,  
Կապույտ հեռվում վարժ սավառնել.

\* \* \*

Հաղիվ դարձած Եքրեմը տուն,  
 Վաղվան դասերն եր նա սերտում.  
 Իջավ մութը հանգարտ քայլով,  
 Շուրջը ծածկեց բարակ քողով:  
 — Տատիկ — Եքրեմն հանկարծ ասաց,  
 Ուրախ ձայնով, զվարթացած, —  
 Մեր ուսուցիչ Թալամն այսոր  
 Շատ բան պատմեց ինձ համար նոր, —  
 Ողանափի մասին պատմեց,  
 Հերոսներին նա մեր զովեց,  
 Վերջն ել հարցրեց.  
 «Ձեզնից ով ե ուզում դառնալ  
 Քաջ ողաշու և սլանալ  
 Դեպի լուսին, դեպի ամպեր» — .  
 Յես, ասացի, խիստ անհամբեր,  
 Յես ել, ասաց, Սարիրն հանկարծ:  
 Յեկ յերկուսս ել ուրախացած՝  
 Վորոշեցինք դառնալ շուտով  
 Ողաշուներ՝ սովորելով.  
 Համաձայն ես, տատիկ, ասա:  
 — Շատ ուրախ եմ, թոռնիկ, — ասաց:

\* \*

Սովորելով յերկու տարի՝  
 Դարձավ Եքրեմն արդեն արի  
 Կարմիր—կարմիր մի ողաշու.  
 Դեպի վերեվ ե նա թոշում,  
 Դեպի լուսին, դեպի ամպեր,  
 Արձաթափայլ դեպի աստղեր...  
 Թեփեր ունի ամուր հիմի,  
 Իսկ ճակատին՝ աստըղ կարմիր:

●

ԾԻԾԵՌՆԱԿ  
(Ա. Ա. Վան)

1

— Մայրիկ, նայիր ծիծեռնակին,  
 Նուրբ ճյուղերից նրա բնին,  
 Ինչքան լավ ե, ինչքան սիրուն.  
 Յերբ վոր բացգում ե նոր գարուն,  
 Գիտեմս, նա մեզ չի մոռանում,  
 Գալիս մեզ մոտ — բույն ե շինում:  
 Նրա կտուցը քիչ կոր ե, տես,  
 Նախշունիկ ե, սիրունատես,  
 Զար աչքերը տնկած վրան՝  
 Բայց չի սիրում փիսոն նրան:  
 — Միրիր, բալիկ, ծիծեռնակին,  
 Ու ձեռք մի տա նրա բնին,  
 Հավաքում ե նա արտերից՝  
 Վնասատու միջատներին:

ԱՐԱՐ

2

Որնը, որնը, բալիկ ջան,  
Լեզուգ նոր ե, թըլթլան,  
Ծափիկ արա, ծիծաղիր,  
Շուրջըս ծիծաղ դու մաղիր։

Դե, մեծացիր, իմ լալիկ,  
Մեր որերի դու ծաղիկ.  
Դու մեր աչքի լույսն ես վառ,  
Հոկտեմբերիկ ես պայծառ։

Որնը, որնը, բալիկ ջան,  
Լեզուգ նոր ե, թըլթլան,  
Ծափիկ արա, ծիծաղիր,  
Շուրջըս ծիծաղ դու մաղիր։

ՏՆԱՆ ՅԵՒ ՍԱՌՈՒՅՑՑԸ

(Պ. Ա. Սաբիր)

1

Դպրոցի ճամբին՝ մի տղա  
Սառույցի վրայով սղղաց,  
Բայց ընկավ նա յերեսնիվար,  
Պատահում ե, ինչ իմանար...  
Յերբ վեր կացավ՝ խիստ վշտացած՝  
Նա սառույցին այսպես ասաց.  
— Սառույց, գիտե՞ս վան ես դու,  
Վտանգում ես դու մարդու,  
Սակայն կարճ ե կյանքդ հիմի,  
Շուտով գարուն կլինի,  
Հալչելով ջնուր կդառնաս,  
Վոր մեծ զետին միանաս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐՆԱՆ ՈՐԵՐ

2.

Յեկեք, գարնան ջի՞նջ որեր,  
Տարվա անհւշ լավ որեր,  
Սարում, ձորում, պարտիզում  
Հալեցրեք ձյունը խխում:  
Գետերը թող վարարեն,  
Արոտները դալարեն,  
Ծլի ցորենը թել-թել,  
Ծաղկեն ծառերն ու վարդեր,  
Տերեները կանաչեն  
Յեփ աղբյուրները հնչեն:

	Եջ
1. Ծաղկներն ասին հոկտեմբերիկին	3
2. Պտուղներն » »	5
3. Թելիկն ու Մելիկը	6
4. Ամառային դաշտերում	9
5. Մայրիկի պատիժը	11
6. Տիգրանիկի նամակն ընկ. Ստալինին.	12
7. Շահանիկն եմ	14
8. Ծույլ թափառողը	15
9. Մենք...	17
10. Աքլոր	18
11. Մեխակ	19
12. Մաքրություն	20
13. Եքրեմ.	21
14. Ծիծեռնակ.	23
15. Որոր.	24
16. Տղան և սառուցը	25
27. Գարնան որեր	26



**[REDACTED]**

Տեխ. խմբագիր՝ Աս. Ալբոնյան  
Մրգագրիչ՝ Ա. Արքականյան

Գլավլիսի լիազոր Կ—4570 Հրա. 4090  
Պատվեր 779, Տիրած 5000  
Պետրասի տպարան, Ցեղեվան, Լեռիթի 65

04

ՀՀ Ազգային գրադարան



NL0405450

13148

ԳԻԱԸ 1 Ռ.

ՎԵՍՊԵՐ  
С ДЕТЬМИ  
Гиз Арм. ССР Ереван, 1937